«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 96 500 456, +374 94 546 498
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT07-2301-C (1412)
«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 7-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

| | |
|---|---|
| Ամսաթիվ՝ | 14 դեկտեմբերի 2023 թ. |
| Անցկացման վայր՝ | «Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 / Zoom հարթակ |
| Նիստի սկիզբ՝ | 17:00 |

**ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Սարգիս Բադալյան - ՀԽ նախագահ (առկա),
Աշոտ Մկրտչյան (առցանց),
Արտավազդ Մինասյան (առկա),
Դավիթ Փախչանյան (առցանց),
Լիլիթ Պետրոսյան (առկա),
Լևոն Բուդաղյան (առցանց),
Եվա Արևիկյան (առկա),
Իրինա Գեյկո (առկա),
Տիգրան Բունիաթյան (առցանց),
Տիգրան Հարությունյան (առցանց),
Րաֆֆի Ֆըսթըգճյան (առցանց):

Լևոն Բուդաղյանը մասնակցել է նիստին հարց 9-ից սկսած:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամները (1-8-րդ հարցերին մասնակցել են ՀԽ տասը անդամ), ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը (առկա):

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցել են.
Ռուբեն Հարությունյան (ՀԽ-ի 6-րդ գումարման նախագահ: Առցանց: Մասնակցել է 1-ին և 2-րդ կետերին)
Լիլիթ Մինասյան (ՀԽ-ի 6-րդ գումարման անդամ: Առկա: Մասնակցել է 1-9 հարցերին),
Տեր Մեսրոպ քհն. Արամյան («Այբ» դպրոցի ՀԽ-ի հիմնադիր նախագահ: Առկա),
Դավիթ Սահակյան (գործադիր տնօրեն: Առկա),
Հայկ Պողոսյանը (Գործառնական տնօրեն: Առկա: Մասնակցել է 7-ին և 8-ին հարցին),
Լիլիթ Մուրադյան (Ֆինանսական համակարգող: Առկա: Մասնակցել է հարց 7-ին և 8-ին),
Մերի Հովսեփյան (Ակադեմիական գծով տնօրեն: Առկա: Մասնակցել է հարց 10-ին):

| |
|---|
| Կետ 1. Նոր և նախորդ ՀԽ-ների անդամների ողջունում, ծանոթացում: |
| Կետ 2. 6-րդ գումարման ՀԽ աշխատանքների փոխանցումը 7-րդ գումարման ՀԽ-ին: |
| Հարց 3. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել:<br>Որոշում՝ հարց 3<br>*1. Հաստատել ՀԽ-ի նիստի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի օրակարգը:*<br>*2. Ավելացնել հարց 12. ՀԽ-ի հանձնարարությունների կատարման հաշվետվություն:*<br><br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 4. Նախագահի և քարտուղարի ընտրության:<br>Որոշում՝ հարց 4<br>*Որոշվեց հաստատել Սարգիս Բաղալյանի թեկնածությունը որպես 7-րդ գումարման ՀԽ-ի նախագահ: ՀԽ քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը:*<br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 5. Ռազմավար անդամի ընտրություն: |
| Որոշում՝ հարց 5<br>Որոշվեց չընտրել Ռազմավար դասային կարգի ՀԽ անդամ:<br><br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 6. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ: |
| Հարց 7. 2023-2024 ուսումնական տարվա բյուջեի հաստատում: |
| Որոշում՝ հարց 7<br>*Որոշվեց.*<br>*1. Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բյուջեն ըստ Հավելված 5-ի: Մայիսի նիստին ներկայացնել բյուջեի կատարման հաշվետվություն՝ նախօրոք քննարկելով ֆինսաբյուջետային հանձնաժողովի հետ:*<br>*2. Ձևավորել Ֆինանսաբյուջետային հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝ Սարգիս Բաղալյան, Րաֆֆի Ֆըսթըգճյան և Դավիթ Փախչանյան:*<br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 8. 2023 թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող կազմակերպության ընտրություն: |
| Որոշում՝ հարց 8<br>*Որոշվեց հաստատել «Բի Դի Օ Արմենիա» ընկերությունը որպես «Այբ» դպրոցի 2023թ և 2024թ. ֆինանսական աուդիտն իրականացնող կազմակերպություն:* |

| |
|---|
| Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 9. Կազմակերպչական կառուցվածքի արդյունավետության գնահատման «Այբ» հիմնադրամի և «Այբ» դպրոցի համատեղ աշխատանքային խմբի զեկույց: |
| Հարց 10. Միջին դպրոցում կրկնուսույցների ծառայությունից օգտվող երեխաների վիճակագրության վերլուծություն և առաջարկվող լուծումներ: |
| Հարց 11. Հաջորդ նիստերի օրվա հաստատում: |
| Որոշում հարց 11<br>*Որոշվեց ՀԽ-ի հաջորդ տարվա նիստերը հրավիրել փետրվար 15-ին, մայիսի 2-ին, հուլիսի 4-ին, սեպտեմբերի 26-ին և դեկտեմբերին 12-ին Երևանյան ժամանակով ժամը 18:00-ին:*<br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 12. ՀԽ-ի հանձնարարությունների կատարման հաշվետվություն:<br>Հարցը չի քննարկվել ժամանակի սղության պատճառով: |
| Կետ 13 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր:<br>Բոլոր հարցերը ներկայցնել փետրվարի 15-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ: |
| Կետ 13. Նիստի ավարտ<br>Հանդիպումն ավարտվեց ժամը 20:25-ին: |

ՀԽ նախագահ

Սարգիս Բաղալյան ______________________

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան ___________________